891.99.092โนน
ว-78

13 APR 2011

ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

1829—1866—1929

Յուցակ նրան նվիրված ցուցահանդեսի իրերի

ԾՆՆԴՅԱՆ 100-ամյակի առթիվ

891.99-092 Նալբ
Մ-78

ԵՐԵՎԱՆ—1929

ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՊԵՏՄԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ջ31.99.032 Գալբաձ
Մ-78

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

1829—1866—1929

Ցուցակ նրան նվիրված ցուցահանդեսի իրերի

ԾՆՆԴՅԱՆ 100-ամյակի առթիվ

ՄԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱՆԳԱՐԱՆԻ

1929—Երևան

Ա. Մեսրոպի անվան Հանրապետական Գրադարան

02 JUL 2013

70.244

Տպագրվում է Խորհրդային Հայաստանի
Պետական Թանգարանի վարչության
վորոշմամբ:

Վարիչ՝ Ռ. Դրամբյան

1158
42.

Գրառեպվար № 2909 (ը)

Պատվեր № 1343 Տիրաժ 360

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
(1829—1866—1929)

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

1829 - 1866—1929

Նալբանդյանը ծնվել է Նոր Նախիջևանում 1829 թվի հոկտ. 26-ին հին տոմարով և վախճանել է աքսորի մեջ Սարատովի նահանգի Կամիշին քաղաքում 1866 թվի մարտի 31-ին հին տոմարով։ Նա ուսել է Տեր-Գաբրիել Պատկանյանի մասնավոր դպրոցում, զարգացել ու լրացրել է յուր գիտության թերին ինքնազարգացումով։ Մի վորոշ ժամանակ էլ նա դասախոսություններ է լսել Մոսկվայի համալսարանի բժշկական բաժնում, իբրև ազատ ունկնդիր։ Այս բոլորի շնորհիվ նա այնքան գիտություն է ձեռք բերել, վոր կարողացել է, նախ, քննություն տալ Պետերբուրգի համալսարանում և հայոց լեզվի ուսուցիչ լինելու իրավունք ձեռք բերել, և հետո նույն համալսարանում արևելյան լեզուների կանդիդատի աստիճան ստանալ։

Նա լեզել է, նախ, տիրացու Նոր-Նախիջևանի մայր յեկեղեցում, Վահանպետյան Մատթեոս առաջնորդի անձնական քարտուղար, կարճ ժամանակ հայոց լեզվի ուսուցիչ Լազարյան ճեմարանում, և հետո արդեն դարձել է գրական, հասարակական և հեղափոխական գործիչ։

Իբրև գրական գործիչ, նա լեզել է Ստ. Նազարյանցի «Հյուսիսափայլի» գլխավոր աշխատակիցը և յուր գրվածներում յերևան է հանել խոշոր հրապա-

բակախոսի ընդունակություն ու խառնվածք։ Իբրև հասարակական գործիչ, նա է յեղել վոր զրել է ու հրատարակել Ն. Նախիջևանի հայանի յեկեղեցական գումարների հաշվետվության գործը և ընտրվել է յերևան փոխան ու գնացել Հնդկաստան, բերել Նախիջևան Կալկաթայում վախճանած հայանի Մասեհ Բարաջանի և Յեկատերինե Խոջամալյանի կտակվանդած գումարները։ Իբրև հեղափոխական գործիչ, նա յուր արտասահմանում յեղած ժամանակ ծանոթացել է ռուս եմիգրանտ հեղափոխականներ Գերցենի, Ոգարյովի, Բակունինի և մյուսների հետ և համախոհ ու գործակից է հանդիսացել նրանց։ Յուր հեղափոխական գործունեության համար նա ձերբակալվել ու բանտարկվել է Պետրոպավլովսկ բերդում, վորտեղ յերկու տարի և տասը ամիս մնալուց հետո, դատապարտվել և աքսորի Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը և այնտեղ վախճանել է թոքախտից։ Նրա մարմինը բերվել է Ն.-Նախիջևան և ամփոփվել Ս. Խաչ վանքի բակում, վորտեղ նրա գերեզմանի վրա ներկայումս մահարձան է դրված։

Նալբանդյանի գրվածները ամփոփված են յերկու հատորի մեջ, վորոնք լույս են ընծայվել 1903 թ. Ն.-Նախիջևանում։

Նրա բանաստեղծություններից հայանի յեն «Ազատն ասված», իսկ առանձին գրքերով հրատարակվածներից՝ «Յերկու տողը», «Ղազար Փարպեցու թղթի աշխարհաբար թարգմանությունը», «Թափառական Հրեայի» առաջին հատորի թարգմանությունը և «Յերկրագործություն, վորպես ուղիղ ճանապարհ»։

Նալբանդյանի ծննդավայր Նոր-Նախիջևան քաղաքը

1) Ռուսաց Յեկատերինե Կայսերուհու Ղրիմից Նոր Նախիջևան փոխադրված հայ հասարակության 1779 թվի նոյեմբ. 14 ին տված արտոնությունների հրովարտակը պետության մեծ կնիքով, փառակազմ մագաղաթ, վոսկենկար և զարդանկար, կայսերուհու ինքնաձեռագիր ստորագրությամբ, վորի հիմունքով կազմակերպված է յեղել Նոր-Նախիջևան հայաքաղաքի բովանդակ կառավարությունը և կյանքը։

2) Նոր-Նախիջևանի հատակագիծը — „План города Нехичевана, прожектирован в 1811 году“.

3) Քաղաքի հիմնադիր «Համայն Ռուսաստանի նուիրակ» Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի մեծադիր յուղաներկ պատկերը, վոր կախված է յեղել Նոր-Նախիջևանի «դումայի» դահլիճում։

4) Նոր-Նախիջևանի առաջին կառավարության — Հայկական մագիստրատի «դատաստանագիրքը», մի խոշոր բոլոր գրով գրված ձեռագիր, վորով մինչև 1861 թիվը կատարվել է քաղաքի և դրա հինգ գյուղերի դատավարությունը։

5) «Հակասրբազանական» կուսակցության պարագլուխ Հովհաննես Աբրահամյանի մեծադիր յուղաներկ պատկերը, վոր դեռ Ղրիմում պատրաստված է ընտրված յեղել, գնացել է Պետերբուրգ, բերել է արտոնությունների հրովարտակը, «առաջին դատավորի» պաշտոն է վարել Մագիստրատում և մաքառել է Հովսեփ սրբազանի դեմ։

6) Նոր Նախիջևանի հասարակության համախոսականը Աբրահամյանի դեմ բազմաթիվ մեղադրա-

կան կետերով, գրված հայերեն և ռուսերեն 1802 թվի հոկ. 17-ին և ուղարկված առանձին պատգամավորների ձեռքով Պետերբուրգ բարձրագույն իշխանության, վոր հանեն նրան, արտաքսեն հասարակության միջից։

7) Նոր-Նախիջևանի հասարակության համախոսականի պատճեն Աբրահամյանի կուսակից Մանուկ Տարեջանյանի դեմ, գրված 1796 թվի հունվարի 23-ին, հասարակության միջից նրան արտաքսելու մասին։

8) Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ Հարություն Խալիբյանի պատկերը, վոր 15 տարի շարունակ միահեծան կառավարել է Նոր-Նախիջևանը և Թեոդոսիո դպրոցի հիմնադիրն է յեղել։

9) Ներսես Ե կաթողիկոսի մեծադիր պատկերը, վոր կարգել է Խալիբյանին լիազոր «սթոռական» և քաղաքի ու գյուղերի յեկեղեցական գումարների տնորենությունը հանձնել է նրան։

Նոր-Նախիջևանի կյանքի առաջին շրջանում առաջ յեկած այդ «սրբազանական և հակասրբազանական» կամ Աբրահամյան կուսակցությունները և դրանց կռիվները իրենց ներքին բովանդակությամբ և պայքարելու միջոցներով հաջորդականություն և կապ են ունեցել հետևյալ յերկրորդ շրջանում առաջ յեկած «Խալիբյան և Հայրապետյան» կուսակցությունների և դրանց կռիվների հետ, յերբ ասպարեզ է դուրս յեկել և գործել Նալբանդյանը։

Նալբանդյանը յուր մանկության յեվ աշակերտության ժամանակները

10) Նալբանդյանի ծննդյան վկայականը – „Свидетельство“, հանված 1853 թվի ոգոստոսի 15-ին, Քիշինևի կոնսիստորից 493 համարով։

11) Նրա մի «հայտարարության» պատճեն, տրված 1852 թ. Նոր Նախիջևանի ու Բեսսարաբիո առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոսին և հանված սինոդի 1852 թվի հունիսի 11-ի որագրությունից, վորից յերևում է, վոր նա ծնված է վոչ թե 1829 թվի նոյեմբերի 2-ին, այլ նույն թվի հոկտեմբերի 26-ին հին տոմարով։

12) Նրա աշակերտության վայելչագրության որինակները, յերեք հատ։

13) Նրա ձեռքով պղնձե տախտակի վրա գծագրված մի ծաղրանկար-փոքրավորը գինի և ժառուցանում մի քահանայի, վոր այն ժամանակները հայտնի չե յեղել քաղաքում, իբրև արբեցող։ Նալբանդյանը յուր յոթ տարեկան հասակից արդեն սկսել է ծառայել Ս. Թեոդորոս յեկեղեցում, վորի թաղում նրանց հին տունն է յեղել.

14) Նրա ուսուցիչ Պատկանյան Տեր-Գաբրիել քահանայի գործունեությունը – նրա պատկերը և Ն.-Նախիջևանի հասարակության համախոսականը հանելու նրան հասարակության միջից և քաղաքից.

15) Նրա քույր Գայանեի (տիկին Խաչատրյան) մեծադիր լուսանկարը, վորին գրված է նրա վերջին նամակը։ Նրա Սերովբե և Լուսեղեն յեղբայրների լուսանկարները.

16) Նրա հին ձևի հեռադիտակը։

17) Մկրտիչ վարժապետ Յեկենյանի «Որինակ հայկական արվեստագիտության» (գեղագրության), տպագրված 1840 թ. «Ի Նոր-Նախիջևան ի պետս դպրոցաց», վորի վրա նա սովորել և վորից ընդորինակել է յուր գեղեցիկ ձեռագիրը.

18) «Ներբող Որոտման Առաքելոյն մեծին Յակոբայ և աստվածաբան ավետարանչին Յովհաննու» գիրքը, վոր Տեր-Գաբրիել Պատկանյանը նվիրել է յուր աշակերտ Նալբանդյանին 1845 թվի նոյեմբերի 28-ին, ընծայականով—«ի Տեր Գաբրիել Սերովբյան Պատկանյանե տո Միքայել Ղազարեանն յիշատակ».

19) Նալբանդյանների նոր տան լուսանկարը. (Նոր-Նախիջևան 26 գիծ), վորտեղ ապրել է Նալբանդյանն յուր պատանեկության ու յերիտասարդության հասակում։

Նալբանդյանը «տիրացու»

20) Նոր-Նախիջևանի Ս. Լուսավորիչ մայր-յեկեղեցու լուսանկարը, վորտեղ Նալբանդյանը վարել է յուր տիրացության պաշտոնը.

21) Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիո առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոսի «Յայտարարություն»-նը Նալբանդյանի «տիրացու» կամ «դպիր» ընդունվելու և ջահնկալության աստիճան ստանալու և հոգևոր կոչման մեջ հաստատվելու մասին, հանված Եջմիածնի Սինոդի 1852 մայիսի 26-ի որագրությունից.

22) Նալբանդյանի յերկու հնագույն նամակների պատճենները, գրված Եջմիածին Նոր-Նախիջևանցի տիրացու Սարգիս Պողովին (հետո Տեր-Բարսեղ քահանա)—մեկը 1846 թվին «Խ. Ծ. Միքայել դպիր Ղազարյան Ուստայանց» ստորագրությամբ, մյուսը նույն թվի մարտի 5-ին «Գրե Միքայել Ղազարյան դպիրն սբ. Լուսավորչայ Ավագ յեկեղեցվոյ ի մայր աթոռն Էջմիածին» ստորագրությամբ։ Այդ նամակներից առաջինն է, վոր գժտության պատճառ է յեղել նրա և Ներսես կաթողիկոսի մեջ.

23) Ներսես կաթողիկոսի ինքնաձեռագիր կոնդակը Խալիբյանին՝ քննելու նամակների հանգամանքները և արժանավոր պատիժը տալու նրան.

24) Նրա հին ձեի կամերտոնը։ Նալբանդյանը բարձր բամբ ձայն է ունեցել, սիրել է յերգել և յեռաժշտության սիրահար է յեղել։

25) Նոր Նախիջևանցի Հովհաննես Մարտիրոսյանի «Տրովատոր», յերաժշտություն Հովսեփ Վերդիի, վոր թարգմանված է Նալբանդյանի խորհրդով 1864 թ. ու մի որինակն էլ ընծայականով նվիրված է նրան.

26) Դպիր Նալբանդյանի դրվատական ճառը Մատթեոս սրբազանի Նախիջևան ժամանելու որը 1848 թ. ապր, 7-ին «Ամենախոնարհ ծառայ Միքայել Ղազարյան Գաբրիելյանց» ստորագրությամբ.

Նալբանդյանը «Առաջնորդական գործոց գրագիր»

27) «Գործ ըստ հրամանի Սրբազան Տյառն առիս, սկսյալ ի 14 հունիսի 1850 ամի», վորի մեջ գտնվում են նրա գրած թղթերից մի քանիսը.

28) Յեկեղեցական գումարների առթիվ ծագած կռիվների ժամանակ Խալիբի ու նրա համախոհների դեմ մաքառող Հայրապետական կուսակցության պարագլուխ Կարապետ Հայրապետյանի պատկերը.

29) Նալբանդյանի առաջին վոտանավորները—յերկուսը գրաբար, մեկը աշխարհաբար (Նախիջևանի բարբառով), տպագրված Տեր-Գաբրիել քահանա Պատկանյանի «Արարատ»-ում (1850—51), աշխարհաբարը կրում է «Ցիմարաց ուսման վերա ունեցած կարծիքը» խորագիրը և գրված է ռուսաց յերգիծաբան իշխան Անտիոք Կանտեմիրի (Խան-Դեմիր) (Князь

Антиох Дмитриевич Кантемир 1708—1744) „На хулящих учение или к уму моему“ *վոտանավորի հետևողությամբ.*

30) «Արարատ»-ի 1850 թվի չորս տետրակը, վորոնք պահպանվել են նրա թղթերի մեջ.

Նալբանդյանը Մոսկվայում—ուսուցիչ Լազարյան ճեմարանում յեվ բժշկական մասի ազատ ունկնդիր համալսարանում

31) Նալբանդյանի ճեմարանում ուսուցիչ լինելու համար Պետերբուրգի համալսարանից ստացած վկայականը—„Свидетельство“. ստացված համալսարանից 1853 թվի սեպտ. 30-ին։ Լազարյան ճեմարանի պատկերը.

32) Նալբանդյանի յերկու նամակը յուր յեղբայր Ղազարոսին, գրված 1855 թվի փետր. 10-ին և հուլիսի 11-ին, վորոնց վրա գրված է յուր հասցեն. „Студенту Московского Университета Михаилу Лазаровичу Г-ну Налбандову“.

33) Նալբանդյանի նամակները Նախիջևանի յերկրորդ կարգի վանական Գրիգոր Կարապետյան Սալթիկյանին, գրված Մոսկվայից 1856, 7, 8 թվերին յուր ուսանողության ժամանակները.

34) Նալբանդյանի ծանոթությունը Մսեր Մագիստրոսի, Մկրտիչ Եմինի և Ստ. Նազարյանցի հետ. դրանց պատկերները.

35) Գիտնական բժիշկ Ստեփաննոս Շահրիմանյանի «Անդեղայ ժանտախտի» ձեռագրի Նալբանդյանի ձեռքով գրված որինակը, նվիրված Եմինին, ընծայականով 1853 թվին։

36) Հյուսիսափայլի հրատարակությունը. Նալբանդյանի նամակի պատճեն Սիմոն Գրիգորյան Սուլթանշահին, գրված Մոսկվայից 1856 թվի մարտի 21-ին, վորի մեջ կա «Հյուսիսափայլի» հրատարակության պատմությունը.

37) Հյուսիսափայլի առաջին տետրակները և նրա մյուս աշխատակից Սմբատ Շահազիզյանցի կարծիքը Միքայել Նալբանդյանի մասին իր «Լևոնի վիշտը» գրքի մեջ.

38) Նալբանդյանի թարգմանությունները—«Թափառական հրեյա (1857), վորին սկզբից կցված է Ճիզվիթների գործունեության ամփոփ պատմությունը, Դքսուհի գը Շևրիոզ, գործ Կլեմանս Բորերտի (1858 թ.).

39) Նալբանդյանի „Ну хорошо“ *(1856—7) և «Շիպելի աղջիկ Մարիամը» վոտանավորները, «Կուտանք հազարը, կըլա բազարը» (Նախիջևանի բարբառով կատակերգությունը), վորից պահպանվել է առաջին թերթը խորագրով, 1859 թ.։*

40) Նալբանդյանի «Յաղագս Հայկական Մատենագրության Ճառ» ինքնաձեռագիր գրվածքը և «Յերկու խոսք»-ը.

41) Նալբանդյանի ժամացույցը (1857 թ.), գրամաքսակը ու զգեստի խոզանակը (1855 թ.), խոշորացույցը և այցելատոմսերը ֆրանսերեն վերտառությամբ։

Նալբանդյանը առաջին անգամ արտասահմանում

42) Նալբանդյանի նամակը Գրիգոր Սալթիկյանին ճանապարհից, գրված 1859 թ. մարտի 31-ին.

43) Նալբանդյանի նամակը Գրիգոր Սալթիկյանին Պարիզից 1859 թ. 23 ապր. 5 մայիս.

44) Ծանոթություն Ստեփան Վոսկանի հետ։ «Արևմուտք» որագիրը։

45) Նալբանդյանի «Աղատն աստված» (1859 թ. սեպ.) վոտանավորը և նրա լուսանկարները այդ վոտանավորով։

46) «Ապոլոնին» (1859 թ.) և «Իտալացի աղջկա յերգը», (1859 թ.), վոր գրված և Իտալիո աղատագրման գլխավոր գործիչներ Մաձինիի և Գարիբալդիի գործունեության ազդեցության ներքո.

47) «Մանկության որեր» վոտանավորը, գրված 1859 թվին։

Նալբանդյանի վերադարձը Արտասահմանից

48) Նալբանդյանի վերադարձը արտասահմանից (1859 թ. հոկ.). և բաժանվելը Հյուսիսափայլից — Նալբանդյանի նամակը (պատճեն) Գրիգոր Սալթիկյանին այդ մասին, գրված 1859 թ. հոկ. 27-ին.

49) Մի իտալուհու կամ ֆրանսուհու պատկեր և դրա նամակը Նալբանդյանին 1859 թ. հոկ. 24, վորից յերևում է, վոր Նալբանդյանը մտերմական հարաբերության մեջ է յեղել նրա հետ.

50) Նալբանդյանի կնիքներն — խաչի ու խարսխի փորագրություն և բոցավառ սրտի պատկեր, մալաքիտի կնիք բույի պատկերով և «sapientia» վերտառությամբ, յերկաթե կնիք բույի պատկերով և «sapientia Dei» վերտառությամբ։ Բուն Նալբանդյանի եմբլեմն է յեղել.

51) Նալբանդյանի մի յերկտող նամակը Շամախեցի վաճառական Սադա Դավթյան Ալեքսանդրյանին. Սադայի լուսանկարը և մի լուսանկար, հավանորեն Նալբանդյանինը.

52) «Կնդուկ պոշատի ու նրա Սանչոյի մկրտությունը» վոտանավորը (1859 թ.) Այվազյան Գաբրիել վարդապետի մասին.

Նալբանդյանը Պետերբուրգում, Նախիջևանում, Եջմիածնում, Թիֆլիսում

53) Նալբանդյանի հաջողությամբ քննության յենթարկվելը Պետերբուրգի համալսարանում. նրա դիպլոմը, տրված համալսարանի արևելյան ֆակուլտետի Հայ-վրացական բաժնից 1860 թվին 1849 համարով.

54) Նալբանդյանի մտերիմ Միքայել Միանսարյանի պատկերը.

55) Նալբանդյանի «Կոչը» Գաբրիել վարդապետ Այվազյանի կոնդակի առթիվ — «ընդունելություն Այվազի կոնդակին».

56) Նալբանդյանի վերադարձը Նախիջևան, ընտրվելը պատգամավոր և Եջմիածին գնալը — Նալբանդյանի յերեսփոխանության թղթի Մատթեոս կաթողիկոսի ձեռքով վավերացրած որինակը։ Թղթի վավերացման ձևի ու խմբագրության որինակը գրել տվել է կաթողիկոսին Նալբանդյանը.

57) Հավատարմագիր, տրված Նալբանդյանին Նախիջևանցի 8 քաղաքացիների ստորագրությամբ՝ իրենց կողմից ներկայացուցիչ լինելու Եջմիածնում յեկեղեցական գումարների վերաքննության ժամանակ, ըստ պահանջման Մատթեոս կաթողիկոսի, 1860 թ. ոգ. 13։

58) Նալբանդյանի թուղթը այդ մասին կաթողիկոսին 1860 թ. սեպտ. 7-ին, Եջմիածին.

59) Նալբանդյանի թուղթը հիշյալ քաղաքացիներին վերաքննության բացասական հետևանքի մասին շնորհիվ քննիչ Մակար և Ղուկաս յեպիսկոպոսների. 1860 թ. հոկտ. 10, Եջմիածին.

60) Նալբանդյանը Թիֆլիսում—նրա կաթողիկոսի բերանից գրած թուղթը իշխան Ալեքսանդր Իվանովիչ Բարյատինսկուն՝ կաթողիկոսի ձեռքով վավերացրած յուր յերեսփոխանության թուղթը հաստատելու և այդ մասին տեղեկացնելու անգլիական պետության, 1860 թ. հոկտ. 14. Եջմիածին.

61) Նալբանդյանի ձեռքով գրած նույն թղթի հայերեն ընագիրը, 1860 թ. հոկտ. 7 Եջմիածին.

62) Հարություն Խալիբյանի և Այվազյանի բողոքաթղթերը Մատթեոս կաթողիկոսին Նալբանդյանի պատգամավոր ընտրվելու և յեկեղեցական գումարների վերաքննելու խնդրի մասին, 1860 թ. սեպ. 10։

Նալբանդյանի ուղևորությունը Հնդկաստան

63) Նալբանդյանի պաշտոնական թուղթը Հայրապետյանին յուր ուղևորության և Լոնդոն հասնելու մասին, 1861 թ. հունվար հին տոմ. 12, նոր տոմ. 24. Լոնդոն.

64) Նալբանդյանի նամակը (պատճեն) յուր մտերիմ ընկեր Ա. Սուլթանշահին յուր ճանապարհորդության և Կալկաթա հասնելու մասին, 1861 թ. հունիսի 26. Կալկաթա.

65) Ա. Սուլթանշահի լուսանկարները.

66) Բժիշկ Ա. Սուլթանշահի «Հայոց ազգի լուսավորիչը» թատերական-գավեշտական գրվածքը «Հյուսիսափայլում» Խալիբյան դպրոցի մասին, վորի թարգմանության և հարմարեցման հայ իրականության գործակցել է և Նալբանդյանը.

67) Նալբանդյանի յուր ուղևորության ժամանակ կանգ առնելը Պոլսում և նրա հոդվածները այդտեղ Սրվանձյանի «Մեղվում» Զամուռչյան Պատվելիի դեմ և «Պողոսյան ու Ապողոսյան» խնդրի մասին 1860 թ. Սվանձյանի «Մեղու»-ն։ Բամբասանքի բնավորություն կրող մի նամակ Նալբանդյանի Պոլսում խոսածների ու արածների մասին, գրված 1861 թվի հունվ. 28-ին.

68) Նալբանդյանի «Յերկու տող», գրվածքը Այվազյանի և Զամուռչյանի դեմ, 1861 թ. ապրիլ, Պարիզ.

69) Այվազյան Գաբրիելի լուսանկարները նրա յեպիսկոպոսության ու վարդապետության ժամանակները և նրա Խալիբյան դպրոցի պատմությունը, վորի մեջ և նրա կարծիքը Նալբանդյանի մասին.

Նալբանդյանը Կալկաթայում

70) Նալբանդյանի հայցերը (ռուսերեն թարգմանություն), մատուցված Բենգալիո Սուպրիմ-Կորտին (բարձրագույն դատարան) հայազգի դատապաշտպան Պոլի (Բայլ) ձեռքով Մասեհ Բաբաջանի և Յեկատերինե Խոջամալյանի գումարների մասին։

71) Որինակ կտակի Բաբաջանի (1794 թ. մայիսի 10).

72) Պոլի Նալբանդյանին գրած (գործի մասին) նամակներից մի յերկու նմուշ.

1158 42 902

Ա. ՄԱՍԱՆԻՍՅԱՆ
Անվան
Публичная Библиотека

73) Հարութիւն Աբգարի նամակը Նալբանդյանին, վորով նա ուղարկում է նրան Յեկատերինե Խոջամալյանի ժառանգ տիկին Վարվառե Ելիազի անգլիերեն նամակը ի պատասխան յուր Նալբանդյանի նամակի և Նալբանդյանի գրած նամակը տիկնոջը.

74) Տիկին Վարվառե Ելիազի անգլիերեն նամակը Նալբանդյանին, վորով նա հայտնում է նրան, թե պատրաստ է ընդունել Նալբանդյանին.

75) Բենգալիո «Սուպրիմ-Կորտի»-ն հնդկական գումարների մասին ներկայացրած «Բիլ»-ի լիակատար որինակի անգլիերեն բնագիրը.

76) Նալբանդյանի թուղթը Մատթեոս կաթողիկոսին Պարսկահնդկաստանի առաջնորդ Թադեոս արքեպիսկոպոսի ապորինի գործողությունների մասին, գրված Լոնդոնից 1862 թվի հունվարի 20-ին.

77) Նալբանդյանի թուղթը Կալկաթայի Ս. Նազարեթ յեկեղեցու յեկեղեցական Կարապետ Վրթանեսյանին 1861 թ. հին տ. 17, նոր տ. 29 ոգ. Բաբաջանի գերեզմանի մասին և նրա պատասխանը.

78) Ս. Նազարեթ յեկեղեցու և Մասեհի գերեզմանի լուսանկարները.

Նալբանդյանի վերադարձը Հնդկաստանից յեվ յերկրորդ անգամ յերկար մնալը ու շրջելը Յեվրոպայում

79) Նալբանդյանի Բենգալիայից Հայրապետյանի ծախքով բերած և Մոսկվայի կենդանաբանական պարտեղին նվիրած ռնգեղջյուրի լուսանկարը.

80) Արտասահմանից բերած ստերեոսկոպը և հայերեն ջերմաչափը.

81) Հնդկաստանից բերած վայրենի բաժակը.

82) Իտալիայում Նալբանդյանը կտակներից ռուփիներով ստացած գումարը փոխում է իտալական թագավորության առաջին փոխառության արժեթղթերի — 18 տոմսակի արժեքները ռուսերեն.

83) Նալբանդյանի «Ժան-Ժակ Ռուսոյի հիշատակին» և «Հենրիկոս Թոմաս Բոկլի հիշատակին» վոտանավորները, գրված 1862 թվին. Ռուսոյի և Բոկլի պատկերները.

84) Նալբանդյանի ծանոթությունը Գերցենի, Բակունինի և Ոգարյովի հետ — դրանց պատկերները.

85) Նալբանդյանի «Յերկրագործությունը վորպես ուղիղ ճանապարհ», Պարիզ 1862 թ. «Սիմեոն Մնակյան» կեղծ ստորագրությամբ, գրված Գերցենի և մյուսների ազդեցության ներքո.

86) Նալբանդյանի ու Սըվաճյանի խորհրդակցությամբ Պոլսում մի կոմիտե և կազմվում հեղափոխական նպատակներով — Սըվաճյանի նամակն այդ մասին Նալբանդյանին.

87) Աբգար և ընկերության նամակը Նալբանդյանին, գրված Կալկաթայից 1862 թվի հուլիսի 28-ին.

88) Նալբանդյանին համակրող և նրան յերկրորդ Գրիգոր Մագիստրոս կոչող Մատթեոս կաթողիկոսի պատկերը.

89) Նալբանդյանի նամակներով հարաբերություն ստեղծելը Մաձինիի հետ ու դրա և Գարիբալդիի պատկերները.

90) Նալբանդյանի ծանոթությունը Իվան Սերգեյևիչ Տուրգենևի հետ. դրա պատկերը և յերկտող նամակը (պատճեն) Նալբանդյանին.

Նալբանդյանի վերադարձը Պետերբուրգ յեվ այդտեղից Նախիջեվան ու նրա կալանավորումը

91) Նալբանդյանի կալանավորման պատճառը ու մեղադրական փաստաթղթերը.—

ա) 1962 թվի հունիսի վերջերում ձերբակալված «Ֆրոմ Գրիգորի և ընկերություն» առևտրական տան գործակալ Պավել Վետոշնիկովի թղթերի մեջ գտնված Բակունինի յերկու նամակը և 10 որինակ «Ցերկըրագործություն», վոր դա ուղարկել եր յուր յեղբոր կնոջ անունով, Խաֆաֆով հայի միջոցով, Նալբանդյանին հասցնելու համար.

բ) Պալտավայի նահանգում ձերբակալված Անդրեյ Նիշիպորենկոյի թղթերի մեջ գտնված Բակունինի յերկտող նամակը Նալբանդյանին.

գ) Նախիջևանում խուզարկության ժամանակ Նալբանդյանի թղթերի մեջ գտնված Բակունինի հինգ նամակը ծածկագիր բառացուցակով և Պոլսի «Մեղվի» խմբագիր Սըվաճյանի նամակը ծածկագիր բառացուցակով.

դ) Ոգոստոսի 8 ին Պետերբուրգում ձերբակալված Մարկիզ Տրավերսեի թղթերի մեջ գտնված Նալբանդյանին ուղղված Բակունինի հունիսի 4-ի ընդարձակ նամակը.

92) „Былое“ ամսագրի 1906 թվի հուլիսի գիրքը, վորի մեջ տպագրված են Բակունինի Նալբանդյանին գրած նամակների (7 հատ) ռուսերեն բնագրերը և Բակունինի լուսանկարը, քաշված յուր կնոջ հետ, վորի մասին յերկար խոսք և լինում նամակների մեջ։

93) „Освободительное движение 60-ых годов“ Мих. Лемке-ի գիրքը, վորի մեջ գտնվում է Նալբանդյանի դատավարության պատմությունը.

94) Ա.-գո-ի «Միքայել Նալբանդյանի կյանքի հետաքրքիր մի հջը», վորի մեջ թարգմանաբար մեջ են բերված Բակունինի Նալբանդյանին գրած նամակները.

Նալբանդյանը Պետրոպավլովսկում

95) Նալբանդյանի «բանտի հիշատակարանը».

96) Նրա բանտից գրած ռուսերեն նամակները և դրանց հայերեն թարգմանությունները ծանոթաբանությամբ և ներածությամբ «Նորք»-ի գրքերում.

97) Նրա բանտում գրած «Ղազար Փարպեցու թղթի աշխարհաբառ թարգմանության» ինքնաձեռագիր որինակը.

98) Նրա բանտում աշխատասիրած «Աշխարհաբար քերականություն»-ից միքանի ինքնաձեռագիր թերթեր.

99) Նրա բանտում գրած «Աղցմիքը»։

100) «Հեգելը և նրա ժամանակը» Բերլինի համալսարանի մեջ կարդացած Հայմի դասերը, թարգմ. Սալեանիկովի, Ս. Պ.-Բ. 1861 թ.։ Քաղվածք և մտածություններ, ինքնաձեռագիր.

101) Նրա «Համեմատություն Աստվածաշնչի հայ թարգմանության հրեական բնագրի հետ» աշխատասիրությունից մի ինքնաձեռագիր նմուշ—«Մարգարեություն Յեսայայ», գլուխ Կ, Կա և ԿԲ։

102) Նրա բանտից 1863 թ. հունվարի 10-ին գրած թուղթը (պատճեն) Հայրապետյանին յուր՝ Ղազար յեղբոր միջոցով ուղարկած հնդկական գումարի

վերաբերյալ թղթերի մասին, որ դրանք ինչպես և բերված գումարը չեն կարող հանձնվել հասարակութեան, մինչև որ ինքը բանտից դուրս գա և լիակատար հաշիվ տա.

103) Ուղարկած թղթերի ցուցակը.

104) Ա. Սուլթանշահի Նալբանդյանի բերանից գրած հանդիմանական թուղթը Գրիգոր Նալբանդյանին նրա անխոհեմ գործողութիւնների համար.

106) Ալեքսեյևի Բավելինի նկարը, որտեղ բանտարկված է յեղել Նալբանդյանը.

Նալբանդյանը Կամիշին քաղաքում

107) Բժիշկ Ա. Սուլթանշահի վկայականը Նալբանդյանի հիվանդութիւնների մասին։

108) Նոր-Նախիջևանցի Մելքոն Ոչակովի նամակը (Նախիջևանի բարբառով) Նալբանդյանի հիվանդագին վիճակի մասին, յերբ նրան ժանդարմներով տանում են յեղել Կամիշին, 1865 թ. 8 դեկտ. Կամենկո.

109) Նալբանդյանի մեզ հայանի նախավերջին նամակը յուր յեղբայր Գրիգորին, գրված Կամիշինից 1866 թ. փետ. 8-ին.

110) Նալբանդյանի մեզ հայանի վերջին նամակը յուր քույր Գայանեին, գրված Կամիշինից 1866 թ. փետր. 11-ին.

111) «Ղազար Փարպեցու թղթի աշխարհաբառ թարգմանութեան», տպագրված որինակը.

112) Նալբանդյանի շապիկներից մեկը յուր անվան և ազգանվան սկզբնատառերով և ճանապարհորդական լողիկը.

Նալբանդյանի մահը, մարմնի բերելը Նախիջևան յեվ հուղարկավորումը

113) Գրիգոր Նալբանդյանի թուղթը Նալբանդյանի մահվան և մարմնի Նախիջևան բերելու և հուղարկավորելու հանգամանքների մասին, Գրիգոր Նալբանդյանի մեծագիր պատկերը.

114) «Մեղու Հայաստանի» լրագրի 1866 թվի ապրիլի 16-ի համարը (համար 14), որի մեջ տպագրված է Նալբանդյանի մահացուցակը «Մահ» խորագրով.

115) Խալիբյանի փեսա Գեորգ Խոջայանի հեգնական նամակը Տագանրոգ Խալիբանին Նալբանդյանի մարմնի Նախիջևան ժամանելու և հուղարկավորութեան մասին.

116) Նախիջևանի Ս. Խաչ վանքի լուսանկարները, որի բակում թաղել են Նալբանդյանին։

117) Նրա հին մահարձանը, որ կանգնել է նրա վրա նրա քույր Վարվառեն (տիկին Մեսնիկյան), Վարվառե Մեսնիկյանի լուսանկարը.

118) Նրա նոր մահարձանը, գործ Անդրեաս Տեր-Մարուքյանի.

119) Նրա ազգականները, որոնց մեջ և նրա քույր Գայանեն, գերեզմանի մոտ և յեկեղեցու սանդուխքների վրա, լուսանկարներ

120) Նալբանդյանի շքեղ հուղարկավորութեան և դրանից առաջ յեկած քաղաքական հանգամանքների մասին կառավարութեան կատարած քննութիւնը և Նալբանդյանի ժառանգների պահանջը — Նալբանդյանի թղթերի մեջ այդ մասին պահպանված ռուսերեն պաշ-

տոնական թղթերը և Յե. Շահազիզի հոդվածաշարքն այդ մասին «Տարազ» թերթում.

121) Գաբրիել վարդապետ Այվազյանի մի հայատառ տաճկերեն նամակը Նոր-Նախիջևանցիներից մեկին, Նալբանդյանի գլխով անցած աղետների մասին, 1867 թ. հունվ. 11. Բեֆե.

Նալբանդյանի պատկերները

122) Նրա մեծադիր պատկերը շրջանակի մեջ, գործ լուսանկարիչ ու նկարիչ Չերեպախինի.

123) Նրա փոքրադիր լուսանկարները, քաշված զանազան դիրքերով զանազան ժամանակներ.

124) Նալբանդյանի մի մինչև մեծությամբ պատկերը և մի փոքրադիրը, ձեռանկար Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցի նկարչության ուսուցիչ Խաչատուր Հուսիկյանի.

125) Նալբանդանի մի ուրիշ փոքրադիր նկարը, գործ Մ. Սարյանի «Նորքի» մեջ բանտի նամակների հայերեն թարգմանությունների հետ.

126) Նալբանդյանի մեծադիր լուսանկարը (լրագիր կարդալիս).

Նալբանդյանի մասին առանձին գրքերով լույս ընծայված կենսագրականներ—ուսումնասիրություններ

127) Յե. Շահազիզի «Միքայել Ղազարյան Նալբանդյանց» լիակատար կենսագրություն, Մոսկվա 1897 թ..

128) Արսեն Տերտերյանի «Միքայել Նալբանդյան, ազգային հրապարակախոսը» 1910 թ..

1929) Թադևոս Ավդալբեգյանի «Միքայել Նալբանդյան, պատմագրական վերլուծություն» 1912 թ. և II տպագրություն Յերևան 1928 թ..

130) Ալ. Մարտունի «Միքայել Նալբանդյան», Մոսկվա 1919 թ..

131) Ա.-դ «Միքայել Նալբանդյանի կյանքի հետաքրքիր մի էջը և Բակունինի նրան գրած նամակները», Յերևան 1908 թ..

132) Ա. Կարինյանի «Դեմքեր և դեպքեր»-ի մեջ «Միքայել Նալբանդյան քննական ակնարկ» Յերևան, 1928 թ..

133) Միքայել Տեր-Գրիգորյանի «Միքայել Նալբանդյանցի համառոտ կենսագրություն» կցված Նալբանդյանի «Ղազար Փարպեցու Թղթի աշխարհաբար թարգմանության», Ս.-Պ. 1868 թ..

134) Աբրահամ Զամինյանի «Կենսագրական տեսություն», կցված «Միքայել Նալբանդյանցի յերկեր»-ի առաջին հատորին, Ռոստով Դոնի վրա, 1903 թ .

135) Միքայել Նալբանդյանց—№ 3 «Խարազանի գրադարան» կազմեց Հայկ Տեր-Աստվածատրյան, Թիֆլիս 1908 թ..

136) Միքայել Նալբանդյանց, համառոտ կենսագրություն, հրատ. «Արոր» տպ. № 15. Բագու 1896 թ..

Նալբանդյանի գրքերից միայնիսք ճրա ձեռագիր ծանոթություններով

137) Молинари, Густав—Курс политической экономии, СПБ. 1860 г.

138) Մեսրոպ Թաղիադյանց—Ճանապարհորդություն ի Պարսս հատոր I, 1847 թ. Կալկաթա.

139) К. Патканов—Исследование о составе армянского языка, СПБ. 1864 г.

140) Խաչատուր Աբովյան—«Վերք Հայաստանի», առաջին տպագրություն.

141) Աստվածաշունչ, 1805 թ. Վենետիկ։

142) Начальние правила русской грамматики.

143) Ներբող վորդվույն վորոտման, Պոլիս 1823 թ..

«Ազգային գրադարան»
NL0385625

70·244